



ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Կլիմայի փոփոխության ազդեցությունը
վտանգավոր երևույթների դրսևորումների,
մարդու և բնության վրա**

Հունիս 2022 թ.



Ըստ ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գործակալության (UNDRR) աշխարհում արձանագրված վտանգների ցանկը ներառում է 302 վտանգ, որոնք տեսակավորված են 8 խմբերում.

- օդերևութաբանական
- հիդրոլոգիական
- երկրաֆիզիկական
- կենսաբանական
- քիմիական
- բնապահպանական
- տեխնոլոգիական
- սոցիալական

Կլիմայի փոփոխության արդյունքում

- աճում է գրեթե բոլոր բնական վտանգների կայացման հաճախականությունը և վտանգների ուժգնությունը
- ի հայտ են գալիս եղանակային տատանումներ և ծայրահեղ եղանակային դրսեվորումներ
- վերջին 50 տարիների (1970-2019) ընթացքում աշխարհում արձանագրվել է հիդրոոդերևութաբանական աղետների հնգապատիկ աճ

Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպություն,

<https://reliefweb.int/report/world/atlas-mortality-and-economic-losses-weather-climate-and-water-extremes-1970-2019>


Մասնավորապես, խոսքը վերաբերվում է հետևյալ վտանգներին՝

➤ Հիդրոօդերևութաբանական

հորդառատ անձրև, հեղեղում, ջրհեղեղ,
կարկտահարություն, երաշտ, անտառային և
դաշտային հրդեհներ, ուժեղ քամի, մրրիկ,
ջերմաստիճանային և տեղումների ծայրահեղ
շեղումներ, սառցադաշտային լճերի
արտահոսք, ձնահյուս

➤ Երկրաֆիզիկական

սելավ, սողանք, քարաթափում, փլուզում



➤ Կենսաբանական

վնասատուների՝ միջատների և
կրծողների տարածում, վարակիչ
հիվանդությունների աճ, համաճարակ

➤ Տեխնոլոգիական


եղանակով պայմանավորված
օդային, ջրային և ցամաքային
տրանսպորտի վթարներ

➤ Սոցիալական

ներքին ընդհարումներ,
բնակչության տեղաշարժ

Նշված ժամանակահատվածում՝



- գրանցված աղետների ավելի քան **50%-ը**, մահերի **45%-ը** և տնտեսական կորուստների **74%-ը** բաժին է ընկնում հիդրոօդերևութաբանական վտանգներին
- զարգացող երկրներում մահերը կազմում են **91%** մահերի ընդհանուր թվից
- ամենաաղետալի **10** վտանգներից **4-ն** են, որ մարդկային զոհերի հիմնական պատճառ են հանդիսացել. դրանք են՝ երաշտը (**650 000 մահ**), փոթորիկը (**577 232 մահ**), ջրհեղեղը (**58 700 մահ**) և ծայրահեղ բարձր ջերմաստիճանը (**55 736 մահ**)
- ամենամեծ տնտեսական կորուստն են պատճառել փոթորիկները (**521 միլիարդ ԱՄՆ դոլար**) և ջրհեղեղները (**115 միլիարդ ԱՄՆ դոլար**)



Նշված ժամանակահատվածում՝



- միջին օրեկան տնտեսական կորուստները կազմել են **202 միլիոն ԱՄՆ դոլար**
- 1970-ից 2010 թվականը կորուստներն ավելացել են **10** անգամ, 2010-ից 2019-ը միջին օրեկան կորուստը (**383 միլիոն ԱՄՆ դոլար**) 7 անգամ գերազանցել է 1970-1979 օրեկան կորուստների ցուցանիշը (**49 միլիոն ԱՄՆ դոլար**)
- Եվրոպայում գրանցվել է **1 672 աղետ, 159 438 զոհ** և **476.5 միլիարդ ԱՄՆ դոլարի** տնտեսական վնաս: Թեպետ աղետների մեծ մասը բաժին է ընկնում ջրհեղեղներին (**38%**) և փոթորիկներին (**32%**), Եվրոպայում աղետներից զոհվածների 93%-ի պատճառ է հանդիսացել ծայրահեղ բարձր ջերմաստիճանը:

(ա) Գրանցաված աղետների ընդհանուր թիվը՝ 11 072





- Երաշտ
- Շայրահեղ բարձր ջերմաստիճան
- Ջրհեղեղ
- Սողանք
- Փոթորիկ
- Անտառային/դաշտային հրդեհներ

(բ) Գրանցված մահերի թիվը՝ 2 064 929






- Երաշտ
- Չայրահեղ բարձր ջերմաստիճան
- Ջրհեղեղ
- Սողանք
- Փոթորիկ
- Անտառային/դաշտային հրդեհներ

(գ) Հաշվարկված տնտեսական կորուստները՝ 3.6 տրիլյոն ԱՄՆ դոլար




- Երաշտ
- Ծայրահեղ բարձր ջերմաստիճան
- Ջրհեղեղ
- Մուլանք
- Փոթորիկ
- Անտառային/դաշտային հրդեհներ




- Ձնահյուս
- Ափամերձ ջրհեղեղ
- Սառը ալիքներ
- Երաշտ
- Արտաարևադարձային փոթորիկ
- Ակնթարթային հեղեղ
- Մետառային հրդեհ
- Ջրհեղեղ
- Սողանք
- Փոթորիկ
- Կարկուտ
- Չերմային ալիքներ
- Դաշտային հրդեհներ
- Կայծակ/ամպրոպ
- Սելավ
- Գետի վարարում
- Սաստիկ փոթորիկ
- Յրտաշունչ ձմեռ
- Պտուտակահողմ
- Արևադարձային ցիկլոն
- Ձնաբուք

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Օրի ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋԻՆ ՋԵՐՄԱՍԻՃԱՆԸ (ՏՄՋ)
1935-2018 թթ.,
ՇԵՂՈՒՄԸ 1961-1990 թթ.,
ՆՈՐՄԱՅԻՑ



ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՔԱՆԱԿԸ, 1935-2018 թթ., ՇԵՂՈՒՄԸ 1961-1990 թթ.,
ՆՈՐՄԱՅԻՑ

ՏՄՋ - 10,2°C, նորման
ԿԳԵՐԱՋԱՆՑԻ 4,7°C-ով:

2100 թ. ԳԵՏԵՐԻ ՀՈՍԹԸ
ԿԿՐՃԱՏՎԻ 24 ՏՈԿՈՍՈՎ:


ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԳԵՑՆԵԼ.

- ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ՄԻՆՉԵՎ 30% ԴԵԳՐԱԴԱՑՄԱՆ/ԿՐՃԱՏՄԱՆ,
- ԱԳՐՈԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ՝ 100 Մ ՎԵՐ ՄԻՆՉԵՎ 2030 թ. ԵՎ 200-400 Մ՝ ՄԻՆՉԵՎ 2100 թ.,
- ՄՇԱԿԱՐՈՒՅՄԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՎԱՋԵՑՄԱՆ
- ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՎԱՏԹԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՋԵՑՄԱՆ
- ՀԻԴՐՈՉԵՐԵԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՒՈՒՅԹՆԵՐԻ (ՀՎԵ) ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ
- ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՆԿԱՅՈՒՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՌՈԳԵԼԻ ՀՈՂԵՐԻ ԸՆԴԱՅՆՄԱՆ, ՈՌՈԳՄԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ՋՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ,
- ՀՈՂԵՐԻ ՈՒԹԳՆԱՑՈՂ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀՈՂԻ ԷՐՈՋԻԱՅԻ ԵՎ ԲԵՐՐԻՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ

2100 թ.

2000-2018 թթ.

Հայաստանում, **հիդրոդերևութաբանական** երևույթների հետևանքով առաջացած աղետների հաճախականությունը



- Ուժեղ քամիներ, տորնադոներ, փոթորիկներ, ավազե փոթորիկ փոշոտ պտտահողմ,
- ամպրոպ, կայծակ, մառախուղ տեղատարափ անձրևներ, կարկուտ
- ուժեղ անձրև, սելավ
- ձյան առատ տեղումներ, ցրտահարություն, ձնաբուք, մերկասառույց
- Ձնահյուս
- Անտառային հրդեհ
- Ցրտահարություն՝ վեգետատիվ շրջանում
- գետերի ջրի մակարդակի բարձրացում, ջրհեղեղ
- Ավերածություններ, քարաթափում
- Ստորերկրա ջրերի բարձրացում
- Ցորենի արտերի, խոտածածկ տարածքների հրդեհ
- Սողանքներ

1994-2018 թթ.

Հայաստանը կրել է ավելի քան **1,5 միլիարդ ԱՄՆ դոլարի վնաս**՝ ջրհեղեղներից, երկրաշարժերից, երաշտից, կարկտահարումից, գարնանային ցրտահարություններից և սելավներից առաջացած աղետների հետևանքով

ՏԱՐԵԹԻՎ	ԱՂԵՏ	ՄԱՐԶ	ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ
1997		Սյունիք	7.000
1997		Տավուշ	15.000
2000		Արարատ, Արմավիր, Տավուշ, Լոռի, Գեղարքունիք, Արագածոտն, Կոտայք Շիրակ	297.000
2013		Երևան	12.000
2013		Արմավիր	64.000
2018		Շիրակ	9.900

2014-2018 թթ. միայն կարկտահարություններից, ցրտահարություններից և ջրհեղեղներից վնասվել է **77.140 հա** գյուղատնտեսական նշանակության հողատարածք, հանգեցնելով **183,64 մլն ԱՄՆ դոլարի վնաս**.

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎՐԱ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Քննարկեք կլիմայի փոփոխության հետ կապված իրավիճակը Ձեր համայնքում՝ նշելով, մասնավորապես, վերջինիս ազդեցությունը սոցիալ-տնտեսական ոլորտների վրա (համաձայն ստորև աղյուսակի)։

Խոլմբ	Ոլորտ
I	<ul style="list-style-type: none">Մարդու առողջությունԳյուղատնտեսություն
II	<ul style="list-style-type: none">Ջրային ռեսուրսներԵնթակառուցվածքներ
III	<ul style="list-style-type: none">Շրջակա միջավայրՏուրիզմ